

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի --/--/2022թ թիվ ---Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
«--» ----- 2022թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Մարտին Գալստյան

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի
խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-008

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ

(ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ
ՄՈԴԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ)

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների մոդելին ներկայացվող պահանջները, յուրաքանչյուր Ապահովագրողի կողմից սեփական մոդելի՝ Բյուրոյին ներկայացնելու և Բյուրոյի կողմից դրան հավանություն տրամադրելու հետ կապված գործընթացները:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոններում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

- 1) **«Բյուրո»**՝ Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո,
- 2) **«Ապահովագրող»**՝ Բյուրոյին անդամակցող և ԱՊՊԱ պայմանագրի կնքման իրավունք ունեցող ապահովագրական ընկերություն,
- 3) **«Մոդել»**՝ Ապահովագրողների կողմից սահմանված՝ ԱՊՊԱ ոլորտում կիրառվող ապահովագրավճարների գնագոյացման մոդել:

ԳԼՈՒԽ 3. ՄՈՂԵԼԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. Մոդելը, ինչպես նաև դրանում կատարվող փոփոխությունները հաստատվում են Ապահովագրողի իրավասու մարմնի կողմից և կարող են կիրառվել բացառապես Բյուրոյի կողմից սույն կանոնների համաձայն հավանություն տրվելու օրվանից երեք ամիս հետո, եթե Ապահովագրողի որոշմամբ կամ Բյուրոյի տրված հավանության գրությամբ ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Սույն կանոնների 14-րդ կետով նախատեսված դեպքերում Բյուրոն կարող է սահմանել Մոդելի փոփոխության կիրառման ավելի կարճ ժամկետ:

4. Ապահովագրողի կողմից ԱՊՊԱ ոլորտում կիրառվող բոլոր ապահովագրավճարները պետք է հաշվարկվեն Մոդելի հիման վրա:

5. Մոդելի հիմքում դրվում են հետևյալ հիմնական սկզբունքները՝

1) Պետք է համապատասխանի օրենքի պահանջներին և դրանց հիման վրա Բյուրոյի կողմից սահմանված սահմանաչափերին:

2) Պետք է ապահովի ապահովագրական ընկերության և ԱՊՊԱ համակարգի կայունությունն ու բնականոն գործունեությունը, ինչը նաև ենթադրում է, որ Մոդելի հիման վրա հաշվարկված ապահովագրավճարը չլինի չափազանց ցածր կամ բարձր: Մասնավորապես, տարեկան կտրվածքով ակնկալվող ապահովագրավճարների ընդհանուր գումարը պետք է բավարար լինի ԱՊՊԱ ոլորտում տվյալ տարվա ընթացքում Ապահովագրողի անունից կատարվելիք ապահովագրական հատուցումների և այլ ուղղակի ծախսերի համար, միևնույն ժամանակ սահմանափակվի ոլորտի ռիսկայնությանը համարժեք խելամիտ շահութաբերությամբ:

3) Պետք է հիմնվի ապահովադիրների (ապահովագրված անձանց) անհատական ռիսկերի գնահատման վրա և խտրական չլինի միևնույն ռիսկայնությունն ունեցող ապահովադիրների համար: Ընդ որում, Բոնուս-Մալուս համակարգը բոլոր Ապահովագրողների համար սահմանվում է Բյուրոյի կողմից միասնական մեթոդաբանությամբ, իսկ Մոդոլի հիմքում դրված անհատական ռիսկայնության գործակիցները չեն կարող սահմանվել՝ հիմնվելով Բոնուս-Մալուս համակարգի հիմքում ընկած գործոնների վրա:

4) Պետք է լինի իրատեսական: Անհատական ռիսկայնության գործակիցները սահմանվում են՝ ելնելով առկա վիճակագրական տվյալներից և ապագայի նկատմամբ հուսալի ակտուարական կանխատեսումներից: Ընդ որում, կարող է հիմք ընդունվել ինչպես Ապահովագրողի սեփական վիճակագրությունը, այնպես էլ միասնական հարթակներում առկա հասանելի և վերահսկելի տեղեկատվությունը, որի միջոցով կարելի է տարանջատել յուրաքանչյուր ապահովադրի (ապահովագրված անձի) վթարավտանգության աստիճանը:

5) Պետք է լինի բավականաչափ հստակ՝ հնարավորություն ընձեռելով անհրաժեշտ տեղեկատվության մուտքագրման միջոցով անմիջականորեն հաշվարկել ցանկացած ապահովադրի կողմից տվյալ ավտոտրանսպորտային միջոցի համար կնքման ենթակա ԱՊՊԱ պայմանագրով վճարման ենթակա ապահովագրավճարի չափը:

6) Չպետք է հանգեցնի տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը:

ԳԼՈՒԽ 4. ՄՈՂԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՅՈՒՐՈՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Մոդելը Բյուրոյին ներկայացվում է Ապահովագրողի իրավասու մարմնի կողմից հաստատվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Մոդելին կից ներկայացվում են նաև այն հաստատելու վերաբերյալ Ապահովագրողի իրավասու մարմնի որոշումը, դրա հիմքում դրված դատողությունները, ցուցանիշները և հիմնավորումները:

7. Մոդելն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, Բյուրոն գրավոր հավանություն է տրամադրում դրան կամ ներկայացնում է առարկություններ:

8. Անհրաժեշտության դեպքում Բյուրոն կարող է Ապահովագրողից պահանջել ներկայացնել Մոդելի գնահատման համար անհրաժեշտ այլ տվյալներ, որի դեպքում սույն կանոնների 7-րդ կետով սահմանված ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև Ապահովագրողի կողմից համապատասխան տվյալների ներկայացման օրը:

9. Բյուրոն կարող է առարկություններ ներկայացնել Մոդելի վերաբերյալ, եթե այն չի համապատասխանում սույն կանոնների 3-րդ գլխով սահմանված պահանջներին:

10. Առարկություններն ստացվելուց հետո՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, Մոդելը ենթակա է վերանայման և Բյուրոյին ներկայացման՝ հաշվի առնելով առարկություններում նշված հանգամանքները:

11. Վերանայված Մոդելը Բյուրոյին ներկայացվելուց հետո կիրառվում են սույն կանոնների 7-10-րդ կետերով սահմանված կարգավորումները:

12. Բյուրոյի կողմից սույն կանոններով սահմանված ժամկետում Մոդելի վերաբերյալ առարկություններ չներկայացնելու դեպքում ներկայացված Մոդելը համարվում է հավանության արժանացած:

13. Ապահովագրողը ցանկացած ժամանակ կարող է փոփոխություններ կատարել Բյուրոյի կողմից հավանության արժանացած Մոդելում՝ համապատասխան փոփոխությունները ներկայացնելով Բյուրոյի հավանությանը: Մոդելի փոփոխությունները Բյուրոյի հավանությանն են ներկայացվում, և դրանց հավանությունը տարամադրվում է Մոդելի ներկայացման և հավանության տրամադրման համար սույն գլխով սահմանված կարգով:

14. Բյուրոյի պահանջով Ապահովագրողը պարտավոր է 15 աշխատանքային օրվա ընթացքում Բյուրոյի պահանջին համապատասխանող փոփոխություններ կատարել Բյուրոյի հավանությանն արժանացած Մոդելում և փոփոխությունները սույն գլխով սահմանված կարգով ներկայացնել Բյուրոյի հավանությանը, եթե հավանության արժանացած Մոդելի հիմքում դրված ցուցանիշներում տեղի են ունեցել էական տատանումներ՝ պայմանավորված մակրոտնտեսական միջավայրի էական փոփոխություններով (օրինակ՝ համախառն ներքին արդյունքի, գների, փոխարժեքի, տոկոսադրույքի էական տատանումների, հակամրցակցային իրավիճակի դեպքում), ինչպես նաև եթե Մոդելի կիրառման արդյունքում պարզվում է, որ այն էականորեն ճիշտ չի արտացոլում ապահովադիրների (ապահովագրված անձանց) ռիսկայնության աստիճանները:

ԳԼՈՒԽ 5. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. 2023 թվականի հունվարի 1-ից կիրառման ենթակա Մոդելները ենթակա են Բյուրոյի հավանությանը ներկայացման մինչև 2022 թվականի հունիսի 1-ը: